18. ՄՇԱԿ ՏՂԱՆ*

Կէգնի ու չէղնի Սարդիս անունով մարդ մա կէղնի։ Օրմ՝ ա կըսա.— Ես կէրթամ ուրիշ տեղ աշխատիմ։

Կէրթա Մըշու մեշ, կօլորդի, կըսա.— Ո՞ր դիսի կտանի մշակուքեն էնելու։

Հարուստ մարդ մա էնդիեն կիգա, կըսա.— Արի՛, էրթանք մըր տուն, ընձիկ հ՝ըմեն օր փետ բի։

Օրմ՝ ա աղեն կիտա իրեք հատ դևա, չորս հատ էշ, կըսա.— Գնա՛, սարեն ընձիկ փետ բի։

Կէլնի, կէրթա սար։ Սար հեռունդ կէղնի, մուք կիտա, կըսա. «Պառկիմ հ՝ոդա քիչ մա քնիմ։ Լուսըմտին էրթամ փետ բերիմ»։ Սարդիս կքնի։ Լուսըմտին կէլնի դևեք գացած ա, կէրթա կգտնա։ Չորս էշ օր կապեր էր դևեքդեն, չորս լա խեղդած։ Ուր մազդեն կինա, գիկա տուն։

Աղեն կհարցու, կըսա.— Ու՞ր ին իշվանք։

Սարդիս կըսա.— Գիշեր քնա, իշվանք կապեցի դևեքդեն, քընուկ տեխեն հ՝էլա տեսա՝ դևեք գացած են։ Գացի, գտա դևեք, տեսա իշվանք հ՝ըմեն խեղդած են։

Աղեն կըսա.— Բան չէղնի, թաժա իս, չըմ խոսա քըզի,— կմնա շաբաթմ՝ ա, աղեն կըսա.— Ըսօր մըղիկ մըսաֆըր կիգա,

* Վերնագիրը մերն է (Ծ. Կ.)։

հ՞էլի գնա լապտրակ մա տար լվա, մըր մսաֆրին կերակուր շինինք։

Կառնի չախուն, լապտրակ կէրթա ջրի վրեն, կլվա ղլապըստրակ։ Միամիտ լապտրակ ֆըլըթի ուր ձեռքեն, կէրթա հրտ ջրին։ Կվազնի, չկերնա բրռնա։ Կդառնա կիգա, չախուն տարած ին։ Ուր մազդեն կինա, կիգա տուն։

Աղեն կըսա.—Հ՞ո՞ւր ա լապտրակ։

Կըսա.— Ջուր իմ ձեռնեն խլեց տարավ, վըզա՝ չկերցա բռնեցի։ Դարձա էկա. չախու լա տարած ին։

Աղեն չխոսա։ Ամիս մա կմնա։ Օր մա տղեն կտեսնա, իրեք մարդ գիկան աղի տուն։ Մեկ դռնեն կմտնին, մեկէլ դռնեն կէլնին կէրթան։ Օր մա չէ, օր մա աղեն զադ մարդիկ կտեսնա։ Մըշկուն կըսա.—Ըդոք հրմալ ա, իմ կնիկ ապով կիգան։ Օրմ՝ ալ օր էկան, ընձի կասիս։ Քըզի հարիր մաճդա կիտամ։

Մարդիկ կիգան։ Մըշակ կէրթա աղին կասա։ Հընչի աղեն կիգա, մարդիկ գացած ին։ Աղեն խարար չունի։ Աղեն կկանի վըր դռան։

Մըշկուն կըսա.— Իմ թվանք կիտամ քու ձեռ, մըտի տուն, որն օր տեսար՝ սպանիս, մարդ կէղնի, ի՞նչ կէգնի, թըխ էղնի, զարկիս սպանիս։

Աղի տան թավլի մեշ կէղնի ին հատ ձի, ութ հատ էշ, տասհատ տավար։ Մութ կէղնի, էլ տըղեն չգինա՝ հ՞ըմեն կսպանի։

Աղեն կմտնի կիշքա, մարդ չսպաներ ա, ուր բոլոր տավըրներ սպաներ ա։

Մարդիկ փախած են, մեկ դռնով գացած, տղեն չտեսեր ա։ Գիտցեր ա տավըրներ մարդիկն են էղած։ Հ՞ըմեն սպաներ ա։

Տղեն հոկցի կէլնի, կփախնի կէրթա ուրիշ գեղ մա։ Շատ կանոթնա, կէրթա կմտնի տուն մա, կտեսնա պուտուկ մա ապուրդրուկ ա թոնդրան վրեն կէփի։ Տուն մարդ չէղնի, մեկ պառապ, կըսա.— Մորքո՛ւր, փշուր մա ապուր տուր ուտիմ։

Կըսա.— Ապուր չէփեր ա։ Գըռտան ուր ձգերով էներ իմ դուս, էլի էնի պահեա ցուրուր զուր ձգեր չտանի։ Ապուր էփավ, կբերիմ, կիր, գնա։

Տղեն կտեսնա ցուրուր ըն դիեն կիգա, հ՞ինք ուր ինք կմտածա, կըսա. «Իմա՞լ պահիմ ցուրուր, չտանի զձգեր»։

Տղեն կէլնի թել կբերա, ձգեր հ՞ըմեն կկապա իրար, ցուրուր ընդիեն կիգա, կղարկա զձգեր հ՞ըմեն կտանի։

Պառապ կառնի քասե մա ապուր, կիգա, կբերա տղին օր ուտա, պառապ կտեսնա, գրռտան մինակ կաներ ա հ'ոգի։

Տղին կըսա.— Հ'ու՞ր ա ձգեր։

Տղեն կըսա.— Կապեցի հ'իբար օր ցուրուր չտաներ։ Միամիտ, ցուրուր զարկեց զըմեն տարավ։

Պառապ ապուր չիտա տղին։ Կըսա.— Ռեսին կգանգըտիմ։

Պառապ հոկցի կէլնի կէրթա ռեսին կգանգըտի։

Տղեն կհասկընա, կէլնի, հոկցի կփախնի։

Շատ ու քիչ ճամբախ կէրթա տղեն անոթի ծարավ։ Գեղ մա կտեսնա։ Հընչի կէրթա գեղի մոտ, հ'ըմեն գեղացիք կքնին։ Կօլորդի գեղի մեջ, մարդ չտեսնա։ Գողտուկ կէլնի կիգա։ Մարգի մա դուռ կբանա, գաշա, հաց չգտնա։ Վել հասըլ շատ կօլորդի։ Ուր ձեռ կառնի բըղիկ մա։ Ձեռք ձրգա, բան չհասնի։ Քթով հոտ կառնի, մածնի հոտ կիգա ուրնե։ Կբերա փետ մա, կշքու մըշ բըղկին, փետի գլուխ կմածնոտի, գինա օր մածուն կա մըշ բղկին։ Ինք շատ անոթի կէղնի, կբերա զուր գլուխ զոռով կմտու կարսի մեջ, ձեռքեր կերկընցու, կհասնի բղկի տակ։ Կքաշա մածուն կբերա, կուտա։ Կուշտ մածուն կուտա։ Կուզա օր գլուխ բղկեն հանա, էլնի էրթա, կէնա՝ չէնա, գլուխ բղկից չէլնի։ Շատ կտանջըվի, չարա չէղնի։ Հըմա հըմալ կմնա բղկի մեջ։ Կլուսնա, ընջրբրներ կէլնին օր էրթան ցորեն քաղին, տանտըկնոջ կեսին.—Մըզի փշու մա հաց ու մածուն բիր ուտինք, էրթանք։

Տանտըկին կէլնի կիգա, կիշկա, մարգի դուռ բաց ա, կէրթա կիշկա զբղիկ, կտեսնա բղիկ կոռծուկ ա, մարդ մը լա մտուկ ա մըշ բղկին։ Կնիկ կվազնի կիգա տուն, կըսա.— Մածուն կերած ա, մարդ մը լա մտեր մըշ բղկին, մացի մըշ բղկին։ Էնի, չէնի՝ չկրցեր է էլի միշեն։

Կվազնին, կիգան բղիկ կզարկին կկոտրին։

Կես կմնա տղի վիզ դեն, կես կպատի։ Բղիկ կմնա տղի վիզ դեն։ Տղեն կփախնի գիժըռուկ, կէլնի զճամբախ կմոլըրի, կընկնի գեղի մեջ, ընդեն-ընդեն կվազնի, զճամբախ կգտնա։ Տեսնա մարդմ՝ էն դիեն էկավ, շատ կզարզըրի, կըսե.— Արի՛, բղիկ կոտրա, իմ գլուխ հանա միշեն։

Մարդ կիգա բղիկ կոտրա, զտղեն կազատա։ Տղեն հոկցի կէլնի կէրթա։ Շատ ու քիչ ճամբախ կէրթա, սար մը ուրին կհանդիպի, կմտնի քարի մա տակ, կպառկի։ Էրկու օր կմնա հ'ոդի քնուկ,

իդա հախ տղեն կիմնա, կէլնի կնստի փշու մա կմնա, կէլնի ուր ճամբու հետ կէրթա։

Շատ ու քիչ կիգա, գեղի մա կհանդիպի։ Ինք անոթի կէղնի։ Կըսե. «էրթամ գեղ հաց ուտիմ»։

Կէրթա հարուստ տուն մա։ Կտեսնա պղինձ մա միս դրած ա թըվեկի վրեն, կէփի։

Տան տեր կըսա.— Գնա՛, քիչ մա փետ բի։

Փետ բերավ տղեն, կրակ վառա, միս կէփի, տղին կըսա.— Գնա փշում՝ շուր բի, ամներ լվանք օր ըդ հախ ըլնանք, հաց ուտինք։

Տղեն կխնդանա, կէլնի գուժման կքելա տղեն, խաչըրկաթ կասրոի տղի շըլվըրի փող, պղինձ կշըռշի, մսեր հ՚ըմեն կթափին։

Տղեն հոկցի կէլնի անոթի ծարավ կընկնի ճամբախ։ Շատ ու քիչ կէրթա, գեղ մա կտեսնա։ Կէրթա դուռ մա կկանի։ Կըսա.— Մորքու՛ր, հ՚ըսօր ճար տուր, քնիմ հ՚ոդի, հընչի լուանա, կէլնիմ կէրթամ։

Ինչ կէնա, մորքուր տեխ չի տա։ Կմնա հընչի հ՚իրկուն, տան տեր կիգա, կըսե.—Հ՚ո՞րի ըս կանի հ՚ոդի։

Կըսա.— Տեղ կուզիմ, չիտա։

Կըսա.—Տեղ չըկա հ՚ոդա։

Կըսա.— Տեղ չըք իտա, փշու մա հաց տվեք ընձիկ, կէրթամ։

Մարդ ուր կնկան կըսա, էլի փշու մա հաց տուր ուրեն, թըխ էրթա։

Տանտեր հոկցի կհեռանա։ Տղեն գողտուկ կմտնի սըրախ, կվերու դասթե մը լոշ, օր էլնի էրթա։ Տան կնիկ կիգա զգուռ փակա, կէրթա տուն։ Տղեն կմնա սրախ։ Քնել դախ կէգնի, գուռ կթըխթըխցուն, կնիկ կէլնի զդուռ կբանա, իրեք մարդ կբերա տուն։ Քիչ մը կմժլին, մարդիկ կնկան կասին.— Իդ հախ մենք կէրթանք, քու իրիկ չիգա տեսնա զմզիկ։

Կնիկ կըսա.—Իմ իրիկ նոր գնաց, իգա գախ չի գա։

Փշու մա կմնա, իրիկ կիգա վըր գռան, կտեսնա զմարդիկ տուն. Կնկան կըսա.—Դուռ բա՛ց։

Կնիկ զդուռ կբանա։ Մարդ կմտնի տուն, կքաշա խանչալ, կղարկա մարդ մա կսպանա, մեկ էլ էրկու կփախնին, կէրթան սըրախ։ Մարդ հ՚ետևեն կընկնի կէրթա սրախի մեշ, զէրկու մարդ կգտնա, կգաշա զտղեն լա կգտնա։ Զէրկու մարդ կկապա հ՚իբար, տղեն լա կբերա օր սպանա, կտեսնա հաց տղի մոտ։ Տղեն շատ

կղարզրի կըսա.—Ես ան մարդն իմ, օր էկա հ'իրկուն տեխ ուզեցի չտվեցիք, ըդ հախ հաց ուզեցի՝ քո կընկան ըսեցիր՝ էլի հաց տուր թըխ էրթա, դու գացիր, քու կնիկ հաց չտվեց, շատ անոթի ինք, գողտուկ մտա սրախ, լոշ մա վերցի, օր էրթենք, քու կնիկ դուռ փակեց իմ վրեն։ Ես քու ըսած մարգերից չիմ։ Ինձի մի սպանի, թող տուր օր էրթամ։

Տանտեր դուռ կբանա, զտղեն կէնա դուս։ Տղեն կկանի դռան վրեն, սողընծրկեն տղեն կիշկա, տան ըդ էրկու մարդ սրախեն կտանի տուն օր սպանա։ Տղեն կվազնի, կէլնի տանիք դեն, շատ մութ կէղնի, կէլնի հ'էրդրկի վրեն։ Կիշկա սանք, իմա՞լ կսպանա զէդ էրկու մարդ։ Անձրև լա կիգա։ Գետին կլժկընա, տզի ոտ կփըստա, հ'էրդկեն կպատի ըդ իրեք մարդու վրեն։ Տանտեր կհերսոտի, կըսա.—Ես խղճացի զքզի չսպանեցի, դու հ'էլիր իս տանիք, անկըշխլութին կէնիս,—կբռնա զտղեն օր սպանա։

Տղեն շատ կզարզրի, կըսա.—Մութն էր, ճամբախ մոլըրա, էկա պատա էրդրկեն։

Տղեն կթողա, կէրթա։ Հ'ինք զէրկու մարդ կսպանա։ Տղեն կէլնի ուր ճամբախ կէրթա։ Ցոթն օր կքելա, կէրթա ուր պապու գեղ։ Կէրթա հ'ոնի կէգնի մշակ։ Նոր աճողութին կգտնա։

Դառնանք իրեք մարդ սպանողի վրեն։

Ըս մարդ կէլնի, կէրթա համալ մա կգտնա.—Տաս մեճիդ կիտամ քզի. մարդ մա տանիս պահիս,—տանտեր էրկու մարդ կմըտու փեթկի մեջ, մեկ մարդ կպատնքա, կդրա տախտ համըլչուն կասա.—Տա՛ր, հեռու տեխ պահեա, արի՛ քու տաս մեճիդն առ։

Համալչին կշալկա տանի, յոթ գազ գետին կփորա։ Մեռել կհոբա, բերա քարեր, կըլնա վրեն։

Տանտեր փեթկեն կհանա զմեկ մեռել կպատընքա։ Կբերա կդրա տախտ։ Համըլչին կթաղա զան մեկ, կիգա կտեսնա մեռել մա լա էնտեղ դրուկ ա տախտ։

Տանտեր կըսա.—Հընչի՞ դու տարար, պահեցիր, դարձար էկար։ Մեռել քըց քզի շուտ փախավ էկավ։

Կասա.—Ըդ հախ ես գինամ էմալ կպահիմ։

Շալկա զմեռել, կտանի սարի գլուխ։ Ինչքան քար մա կա, կըբերա, կըլնա մեռելի վրեն։ Դառնա տուն կտեսնա, մեկ լա պատընքուկ ա։

Տանտեր կըսա.—Հընչի՞ դու պահեցիր, փախավ էկավ։

Համըլչին կշալկա զմեռել, կտանի օր թաղա։ Հընչի դեղեն

կէլնի, կլուանա, կտանի գեզի մոտ գետի կարմունջ սեխ մը կառնի, կբերա զմեռել, կմտու կարմնջի տըտի տակ, սեխով կզարկա։ Հազ մըլա կիշկա, մոլե մա նստուկ ա ջրի պռուկ, ուր պ... կլվա։ Մոլեն կտեսնա զադ մարդ, կփախնի։ Համալչին կիշկա, գինա մեռելն ա։ Մոլեն կբռնա զխոնջան փախնի, համըլչին կընկնի հ'ետև, կլարա, կտանի գեզի մեջ, կբռնա զմոլեն, կըսա.—Ես քընի պահեցի, դու փախար էկար։

Մոլեն կզարզըրի։ Ինք կքաջա զմոլեն, կբերա կմտու կարմընջի տըտի տակ, սեխով կզարկա, զարկա կսպանա զմոլեն։ Դառնա կիգա, կառնա զուր հախ, կէրթա։